



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ԸՆՏԱՆԻՔԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Փամբակ համայնքի սիրելի բնակիչներ, շնորհավորում եմ բոլորիդ Ընտանիքի օրվա կապակցությամբ:

Ընտանիքը հասարակության բջիջն է, նրա կենսագործունեության կարևորագույն տարրը: Յուրաքանչյուր հայի համար հենց ընտանիքն է իր անձնական պատմության հիմնասյունը. սուրբ՝ ինչպես հայրենիքը:

Առողջ պետության ու հասարակության համար առողջ ընտանիքներ են պետք:

Այն ժողովրդի բարոյական ու ազգային արժեքների կրողն ու փոխանցողն է, այնտեղ են ձևավորվում այն զավակներն, ովքեր աշխարհ են փրկում կամ կործանում:

Սիրելի բնակիչներ, թող ձեզնից յուրաքանչյուրի ընտանիքում տիրի սերն ու ջերմությունը, խաղաղությունը չլքի ձեր օջախները:

Ձեր բոլոր գործերը թող լինեն Աստվածահաճո, և ձեր ընտանիքներից դուրս գան արժանապատիվ քաղաքացիներ:

Հարգանքներով՝

Սուրեն Կոստանդյան



